

Պարապնդումն է դատարկ 1[1]
 Բայց ա՛նառակ՝ երկու ձեռքես կը փախչի,
 Մինչ ետեւէն կը վազեմ ես շնչահատ,
 Ու շըւարուն եւ յոգնած:

Մինչեւ դաշտերը կը վազեմ հետապինդ,
 Մինչեւ անտա՛ռն իսկ 1[1] կ'երթամ.
 Բայց ամենուն կրնայ ընել ինք դարպաս.
 Թուփին, ջուրին, տերեւին.
 Ու լըճակին գիրկը կ'իյնայ, կամ տեսնես
 Ծառին կատարն է թառած:

1[1]Մանուկի պես կը պլլըկի երբեմն ալ
 Մայր թուփերու քըղանցքին.
 Եւ երբ զինքը կը կանչեմ ես սրդողած՝
 Կը քրքըջայ ինք անդին:
 Շա՛ջ, ապտակ մը կը զարնէ մերթ երեսիս,
 Նոյն վայրկեանին կը փախչի,
 Եւ ես ի գո՛ւր կ'իյնամ նորէն ետեւէն,
 Մինչեւ դաշտերը կը վազեմ հետապինդ՝
 Մինչեւ անտա՛ռն իսկ 1[1] կ'երթամ...

Եւ երբ յուսատ կը հեռանամ թիկնադարձ,
 Կռնակես վե՛ր կը մագլի,
 Կամ մագերըս կ'ուզէ համրել, կամ յանկարծ
 Ուժգին մեջքիս կը փարի:

Եւ երբ ցասկոտ նորէն ետիս ես դառնամ
 Վաղո՛ւց փախեր է արդէն,
 Ու չորս 1[1]կողմըս կ'աւրըշտըկէ ու վարդէն
 Կ'առնէ անոր սակաւարին շափրակներ.
 Ու, դարձեալ՝ երբ կը հեռանամ թիկնադարձ՝
 Կըռնակես վե՛ր կը մագլի...

27. ՏԵՐԵՒՆԵՐԸ Կ'ԸՍԵՒՆ...

Ոսկի շաղով օծեցիր
 Կապոյտ ծաղիկն ակերուն,
 Լիճերու պորտը սարսռուն,